ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

«ՈՐՊԵՍ ԱԿԱՆԱՏԵՍ» և «ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱԿԻՑ» ՊԱՏՄԵԼՈՒ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i70.200

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս հոդվածում դիտարկվում է կրտսեր դպրոցականների ստեղծագործական խոսքի զարգացման գործընթացը՝ մայրենիի դասերին «որպես ականատես» և «որպես մասնակից» պատմելու տեսակների կիրառման միջոցով: Հիմք ընդունելով Երևանի Հ. Խաչատրյանի անվան տարրական դասարանների ուսուցիչների, ինչպես նաև առցանց տարբերակով անցկացված հետազոտության արդյունքները՝ վերլուծվել են պատմելու հմտությունների զարգացման նպաստող մեթոդներն ու առկա դժվարությունները: Ներկայացվել են խոսքի տեսակների դերը և արդյունավետության աստիճանը, ինչպես նաև ուսումնասիրվել է պատմելու միջոցով սովորողների հաղորդակցային, վերլուծական և լեզվաբանական հմտությունների ձևավորման միտումները:

Բանալի բառեր ու արտահայտություններ. *«որպես ականատես» «որպես մասնակից» պատմելու տեսակներ, ստեղծագործական կարողության զարգացում, կրտսեր դպրոցականներ, բառապաշարի հարստացում, տարրական դպրոց, խոսքի տեսակներ, փոխներգործուն մեթոդներ, հաղորդակցման հմտություններ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում կարևորագույն դեր ունի պատմելու կարողության զարգացումը, որն առավել արդիական է տարրական դպրոցի սովորողների խոսքի և մտածողության ձևավորման համատեքստում:

Ժամանակակից կրթության պահանջները ընդգծում են ստեղծագործական մտածողության և ինքնարտահայտման հմտությունների ձևավորման անհրաժեշտությունը, ինչը հնարավոր է ապահովել՝ կիրառելով խոսքի տարբեր տեսակներ՝ պատմողական, նկարագրական, դատողական և գնահատողական: «Որպես ականատես» և «որպես մասնակից» պատմելու ձևերն արդյունավետ հիմք են ստեղծում սովորողի անձնական փորձի և աշխարհընկալման ներկայացման համար **(Գյուլամիրյան Ջ., 2008)**: Հոդվածը նպատակ ունի դիտարկել, թե ինչպես են այս ձևերը նպաստում տարրական դասարանի սովորողների ստեղծագործական կարողությունների և հաղորդակցման հմտությունների զարգացմանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված ուսումնասիրությունը իրականացվել է որակական և քանակական մեթոդների համադրությամբ՝ նպատակ ունենալով պարզել տարրական դասարանի սովորողների պատմելու հմտությունների զարգացման առանձնահատկությունները՝ «որպես ականատես» և «որպես մասնակից» պատմելու մոտեցումների կիրառման միջոցով:

Առաջարկում ենք թեմայի ավանդումն իրականացնելիս կիրառել դասախոսություն, խմբային հետազոտություն, տեքստային աշխատանք, հարցում, վարժություններ և առաջադրանքներ մեթոդները, խմբավորում և հասկացությունների քարտեզ հնարները **(Սարուխանյան Ս., Դալլաքյան Ա., Դիշաղաջյան Ն., 2008)**:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Տարրական դպրոցում մայրենիի դասերի ընթացքում «որպես ականատես» և «որպես մասնակից» պատմելու տեսակների կիրառման ճանապարհով կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողության զարգացման գործընթացի վերաբերյալ կարծիք կազմելու նպատակով Երևանի Հ. Խաչատրյանի անվան հիմնական դպրոցի տարրական դասարանների ուսուցիչների շրջանում, ինչպես նաև առցանց տարբերակով անցկացրել ենք

հարցախույզ, մասնակցել է 53 դասվար: Հարցաթերթիկը կազմված էր վեց հարցից: Առաջին հարցով մենք պարզեցինք, թե ուսուցիչների կարծիքով՝ ***սովորողների ստեղծագործական կարողության զարգացման համար կարևո՞ր է պատմելու կարողության ձևավորումը:***

Տրամագիր 1



Այս հարցին կից մենք տվել ենք պատասխան-տարբերակներ: Հարցախույզին մասնակից ուսուցիչների 88%-ը սովորողների ստեղծագործական կարողության զարգացման համար պատմելու կարողությունը պարտադիր է համարում, իսկ 10%-ը նշել է, որ իրենք կիրառում են նաև այլ մեթոդներ

«Որպես ականատես» և «որպես մասնակից» պատմելու՝ սովորողների կարողության զարգացման նպատակով մայրենիի դասագործընթացում խոսքի ո՞ր տեսակներն են առավելապես նպատակահարմար կիրառել հարցին հարցախույզի մասնակիցների 69,2%-ը նպատակահարմար է համարում կիրառել նկարագրական խոսքը՝ շեշտը դնելով սովորողների մանրամասն և վառ նկարագրություններ ներկայացնելու կարողության վրա, 53,8 %-ը շեշտը դրել է ինչպես պատմողական, այնպես էլ դատողական խոսքի վրա, իսկ 32,7%-ն առավել նպատակահարմար է համարում գնահատող խոսքի կիրառումը՝ առաջնահերթությունը տալով վերլուծական կարողության և հիմնավորված

կարծիքներ ներկայացնելու ունակությունների զարգացմանը:

Մենք ևս մեր մանկավարժական աշխատանքի ընթացքում համոզվել ենք, որ երբ սովորողներին հանձնարարվում է պատմել «որպես ականատես» կամ «որպես մասնակից»՝ խրախուսելով դատողական և գնահատող խոսքի տեսակների կիրառումը, նրանք ձգտում են ստեղծագործաբար ներկայացնել իրենց կարդացածը, տեսածն ու զգացածը, դասարանն ավելի ուշադրությամբ է հետևում պատմելու գործընթացին:

Տրամագիր 2



Մեզ հետաքրքրում էր նաև, թե «***Պատմելու տարբեր տեսակների կիրառմամբ կարդացածը վերարտադրելու կարողության զարգացման ուղղությամբ աշխատանքները սովորողների ո՞ր որակներն են զարգացնում»:*** Այս հարցին ի պատասխան ուսուցիչների 38%-ը նշում է, որ պատմելու կարողության ուղղությամբ աշխատանքները զարգացնում են սովորողների գրագետ և հարուստ խոսք կառուցելու կարողությունը, նպաստում են բառապաշարի հարստացմանը, նախադասության կառուցվածքի կատարելագործմանը և մտքերն արտահայտելու կարողության բարելավմանը: Ուսուցիչների 29%-ը կարծում է, որ տարբեր տեսակներով պատմելու կարողության շուրջ աշխատանքը զարգացնում է սովորողների հաղորդակցման կարողությունը, 17%-ը՝ անկաշկանդ արտահայտվելու ունակությունը, իսկ 12%-ը՝

զարգանում է պատմելու ընթացքում դիպուկ բառեր ընտրելու հմտությունը, 2%-ը (1 ուսուցիչ) նշել է, այլ պատասխան տարբերակը, ևս 2%-ը (1 ուսուցիչ) նշել է, որ բոլոր որակներն էլ զարգանում են:

Տրամագիր 3



Ճշտեցինք նաև, թե ***«Պատմելու ընթացքում ի՞նչ մեթոդներ են կիրառում սովորողների ստեղծագործական կարողության զարգացման նպատակով»:*** Հարցախույզի մասնակից ուսուցիչների 55.8%-ը նշել է, որ սովորողների կիրառում է պատմելու տարբեր տեսակներ, 42.3%-ը՝ «երկխոսությունները», 44.2%-ը՝ «բանավեճերը», իսկ 38.5%-ը՝«իրադրային խաղերը»: Նշենք, որ այս հարցին ուսուցիչները տվել են մի քանի պատասխան:

Մենք համամիտ ենք ուսուցիչների կարծիքների հետ. նշված մեթոդների կիրառումն իսկապես նպաստում է սովորողների ստեղծագործական կարողության զարգացմանը:

Տրամագիր 4



Մենք պարզեցինք նաև, թե «***Որպես ականատես» և «որպես մասնակից» պատմելու կարողության զարգացման գործընթացում ի՞նչ դժվարություններ են ունենում մասնակից ուսուցիչների աշակերտները:*** Ինչպես երևում է N8 տրամագրում, հարցախույզին մասնակից ուսուցիչների նշում է, որ հաճախ սովորողները չեն պահպանում տրամաբանական դադարները, 27%-ը՝ գործածում են սխալ ժամանակաձև: Հարցախույզի մասնակիցների 27%-ը նշել է, որ սովորողները «ճիշտ չեն արտահայտում իրենց մտքերը», 11%-ը՝ սովորողներն ունենում են «շարադասության սխալներ», 2%-ը՝ «սովորողները դժվարանում են գեղեցիկ, մտածված և գրագետ խոսք կառուցել և հաճախ չի հերիքում բառապաշարը», 2%- ը՝ «պատմելու կարողության ձևավորման գործընթացում սովորողները դժվարություններ չեն ունենում»:

Տրամագիր 5



Ակնհայտ է, որ կրտսեր դպրոցականների պատմելու կարողության զարգացման գործընթացում դժվարություններ են ունենում նաև ուսուցիչները: Ճշտել ենք նաև, թե ***«Որպես ականատես և որպես մասնակից պատմելու կարողության զարգացման գործընթացում ի՞նչ դժվարություններ են ունենում նրանք»:***

Տրամագիր 6



Այս հարցին ի պատասխան՝ ուսուցիչների 38%-ը նշել է, որ դժվարություններ չի ունենում, 4%-ի կարծիքով դժվարությունները ծագում են սովորողների մեծ քանակով ծանրաբեռնված դասարաններում, 12%-ը դժվարությունները կապում է դիդակտիկ նյութերի պակասի, ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման խնդիրների հետ, 27%-ի կարծիքով՝ դժվարությունը հիմնականում սովորողների քիչ կարդալն է, իսկ 19%-ը նշել է, որ սովորողները ցուցաբերում են անտարբերություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով հարցաթերթիկի հարցերին ուսուցիչների տված պատաս խանները՝ հասկանալի դարձավ, որ սովորողների ստեղծագործական կարողության և տարբեր որակների զարգացման հարցում ուսուցիչների մեծամաս նությունը շեշտում է մայրենի լեզվի դասերին պատմելու կարևորությունը՝ նշելով, որ սովորողների պատմելու կարողությունը զարգացնելու նպատակով գործածում են խոսքի տարբեր տեսակները (պատմողական, դատողական, նկարագրական, և գնահատող), ինչպես նաև տարբեր մեթոդներ: Կարծում ենք, որ տրված պատասխանները սպառիչ են, և որ պատմելու կարողության զարգացման համար անհրաժեշտ է մեծ ջանք գործադրել: Կիրառելով ուսուցման ակտիվ մեթոդներ, դիդակտիկ նյութեր՝ հնարավոր է ապահովել պատմելու սովորողների կարողության զարգացման բարձր մակարդակ, որը կնպաստի նաև նրանց կապակցված խոսքի զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գյուլամիրյան Ջ. (2018)**, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ-97» հրատ.:
2. **Սարուխանյան Ս., Դալլաքյան Ա., Դիշաղաջյան Ն. (2008),** Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, «Վանատուր» տպ.:

REFERENCES

1. **Gyulamiryan J. (2018)**, Hayoc lezvi tarrakan owsowcman met'odika /Methodology of Teaching Armenian Language in Primary School/, Yerevan, “Zangak-97”.

2. **Sarukhanyan S., Dallakyan A., Dishaghajyan N. (2008),** Owsowcman jhamanakakic met'odner, hnarner, varjhowt'yownner /Modern teaching methods, techniques, exercises/, Vanadzor, "Vanatur" printing house.

Кнарик Абраамян

Анализ мнений учителей начальных классов относительно процесса развития у учащихся способности к повествованию «от лица очевидца» и «от лица участника»

Заключение

Ключевые слова и выражения: *развитие творческой речи, младшие школьники, уроки родного языка, повествование от лица очевидца, повествование от лица, участника коммуникативные навыки, аналитические умения, языковые навыки, методы развития речи, трудности в обучении.*

В данной статье рассматривается процесс развития творческой речи младших школьников на уроках родного языка посредством применения видов повествования «от лица очевидца» и «от лица участника». На основе мнений, выявленных в результате опроса среди учителей ереванской школы имени А. Хачатряна, а также анкетированияцпроведенного в онлайн-формате, проанализированы методы способствующие развитию навыков повествования, и существующие трудности. Представлена роль различных видов речевой деятельности и степень их эффективности, а также исследованы тенденции формирования у учащихся коммуникативных, аналитических и языковых навыков посредством рассказа. Выявленные затруднения преимущественно связаны с недостаточным развитием лексического запаса учащихся и трудностями с логической последовательностью изложения. В заключение предложены практические методические рекомендации, направленные на преодоление данных

проблем и повышение эффективности работы по формированию связной повествовательной речи в начальной школе.

Knarik Abrahamyan

Analysis of Primary School Teachers' Opinions on the Development of Students' Ability to Tell Stories "as a Witness" and "as a Participant"

Conclusion

Key words and phrases: *development of creative speech, primary school students, native language lessons, storytelling from the perspective of a witness, storytelling from the perspective of a participant, communication skills, analytical thinking abilities, language abilities, methods of speech development, learning difficulties.*

This article examines the process of developing the creative speech of junior schoolchildren in native language lessons through the use of narration types "from the perspective of an eyewitness" and "from the perspective of a participant." Based on the opinions identified through a survey among teachers of the A. Khachatryan School in Yerevan, as well as an online questionnaire, the methods that contribute to the development of narration skills and the existing difficulties are analyzed. The role of various types of speech activity and their degree of effectiveness are presented, and the trends in forming students' communicative, analytical, and language skills through storytelling are investigated. The identified difficulties are mainly related to the insufficient development of the students' lexical vocabulary and challenges with the logical sequence of presentation. In conclusion, practical methodological recommendations are proposed aimed at overcoming these problems and increasing the effectiveness of work on forming coherent narrative speech in primary school.

Քնարիկ Աբրահամյան - Հ. Խաչատրյանի անվան համար 199 հիմնական դպրոցի տարրական դասարանների ուսուցիչ: abrahamyanknarik86@gmail.com

Кнарик Абраамян - Учитель начальных классов основной школы №199 имени Г. Хачатряна. abrahamyanknarik86@gmail.com

Knarik Abrahamyan - Primary school teacher at Secondary School No. 199 named after G. Khachatryan. abrahamyanknarik86@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 5.07.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 26.07.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 30.0.2025թ.